ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾ է

ՀՍՍՀ Գերագույն սովետի ժողովրդական կրթության, գիտության ու կուլտուրայի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ հանրապետության մտավորականության մի խումբ ներկայացուցիչների միջոցով ուսումնասիրվեց հանրապետությունում կուլտուրայի հուշարձանների պահպանության վիճակը։ Ուսումնասիրողների թվում էին ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանը, պրոֆեսոր Վ. Հարությունյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Ս. Բարխուդարյանը, Ա. Քալանթարյանը, Ժ. Խաչատրյանը, ճարտարապետության թեկնածու Ա. Երեմյանը, ճարտարապետներ Յու. Թամանյանը, Գ. Քոչարյանը, աշխատավորների դեպուտատների շրջանային և քաղաքային սովետների կուլտուրայի և լուսավորության մշտական հանձնաժողովների նախագահները և մտավորականության այլ ներկայացուցիչներ։

Ստուգման արդյունքների հիման վրա ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը քննության առավ «Հանրապետությունում կուլտուրայի հուշարձանների պահպանության վիճակի մասին» հարցը։ Նիստը բացեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը։ Զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ Գերագույն սովետի ժողովրդական կրթության, գիտության և կուլտուրայի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Ծ. Պ. Աղայանը։

Քննարկվող հարցի շուրջը ելույթներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Առաքելյանը, պետական պատմական թանգարանի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը, ճարտարապետության թեկնածու Ա. Երեմյանը, հուշարձանների պահպանության հանրապետական ընկերության նախագահ Վ. Հարությունյանը, պետշինի հուշարձանների պահպանման և վերականգնման վարչության պետ Կ. Հովհաննիսյանը, պետշինի նախագահ Գ. Աղաբաբյանը, արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հանրապետական ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, «Լույս» միավորման կոմբինատի դիրեկտոր Ռ. Ամիրյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի երկրորդ քարտուղար Վ. Բախչինյանը, աշխատավորների դեպուտատների Երևանի քաղսովետի նախագահ Գ. Հասրաթյանը։

Հարցի քննարկմանը մասնակցողների ելույթները և ուսումնասիրողների գրավոր զեկուցումները վկայում են, որ չնայած կատարված մի շարք գրական աշխատանքներին, հանրապետությունում կուլտուրայի հուշարձանների պահպանությունը տակավին պատշաճ հիմքերի վրա չի գտնվում։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը իր ելույթում նշեց, որ հայ ժողովուրդը թողել է խոշոր մշակութային ժառանգություն, որի մեջ առաջնակարգ տեղ են գրավում պատմա-ճարտարապետական հուշարձանները։ Դարերից, նույնիսկ հազարամյակներից մեզ հասած այդ հուշարձանները, բնականաբար, մեծ մասամբ ավերված են, խարխլված և վերանորոգման կամ ամրացման, խնամքի և հոգատարության կարիք ունեն։

Սովետական իշխանության հրապարակած առաջին դեկրետներից մեկով պատմական և մշակութային հուշարձանները հռչակվեցին համաժողովրդական սեփականություն և նրանց պահպանությունը դրվեց աշխատավորների դեպուտատների տեղական սովետների վրա, որոնք զգալի աշխատանք են կատարել այդ ուղղությամբ։ Սակայն վերջին տարիներին տեղական սովետները նկատելիորեն թուլացրել են իրենց գործունեությունը այդ բնագավառում։

Պատմա-մշակութային հուշարձանների պահպանության գործը բարելավելու նպատակով Բ. Ն. Առաքելյանը անհրաժեշտ համարեց իրականացնել մի շարք միջոցառումներ։ Մասնավորապես նա առաջարկեց աշխատավորների դեպուտատների քաղաքային, ավանային և շրջանային սովետներին հանձնել այն հուշարձանների ցուցակները և պասպորտները, որոնք գտնվում են տվյալ սովետին ենթակա բնակավայրերում։ Տեղական սովետների հետ միասին հուշարձանների պահպանման պատասխանատվությունը դնել նաև սովխոզների դիրեկցիաների և կոլտնտեսությունների վարչությունների վրա, վերջիններիս հանձնելով իրենց տնտեսությունների սահմաններում գտնվող հուշարձանների ցուցակները և պասպորտները։ Բոլոր շրջանների աշխատավոր-

ների դեպուտատների սովետների գործկոմներում և Երևանի քաղաքային սովետում ունենալ հուշարձանների պահպանությամբ զբաղվող լիազոր։ Պետշինին կից հուշարձանների պահպանության վարչությունը դարձնել ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հուշարձանների պահպանության վարչություն՝ նրան ենթակա ռեստավրացիոն արհեստանոցով, ապահովելով նրան համապատասխան կադրերով և նյութական միջոցներով։ Շինարարական և մելիորատիվ աշխատանքներ նախագծելիս հատուկ ուշադրություն դարձնել տվյալ վայրի հուշարձանների պահպանության վրա։

Նկատի ունենալով, որ ՀՍՍՀ ԳԱ նախագահությանը կից հուշարձանների պահպանության և ուսումնասիրության գիտա-մեթոդական խորհուրդը վերջին տարիներին դադարել է գործելուց, հանձնարարել ակադեմիայի նախագահությանը կազմակերպչորեն վերակառուցել այդ խորհուրդը և դարձնել գործունյա կազմակերպություն։

Հուշարձանների պահպանության վարչության, Հայկական կամավոր ընկերության և տուրիստական կազմակերպությունների միջոցով հիմնավորապես բարելավել հուշարձաններին վերաբերող գրականության, նկարազարդ գրքույկների, փոստային քարտերի, բուկլետների, տուրիստական ուղեցույցների, մարշրուտային քարտեզների կազմումը և հրատարակումը։

Ընդարձակել բնության պահպանության հանձնաժողովը, այն վերանվանել «բնության և հուշարձանների պահպանության հանձնաժողով», նրա վրա դնելով նաև հուշարձանների պահպանության գործը։

Ճարտարապետության թեկնածու Ա. Երեմյանը իր ելույթում մանրամասն վերլուծեց Հայպետշինին առընթեր ճարտարապետական հուշարձանների պահպանության վարչության և ճարտարապետական հուշարձանների գիտավերանորոգման արտադրական արվեստանոցի գործունեությունը։ Նա նշեց, որ այդ կազմակերպությունների հաստիքների սակավության, կազմակերպական աշխատանքների անբավարար դրվածքի պատճառով ճարտարապետական հուշարձանների պահպանման և գիտավերանորոգման գործում կան զգալի թերություններ։ Դեռևս 1920—30-ական թվականներին խիստ թերի ու մոտավոր կազմվել են Հայաստանի առանձին շրջանների հնագիտական քարտեզներ, որոնք այժմ բոլորովին չեն արտահայտում հազարների հասնող հուշարձանների պատկերը։ Չի պահպանվում հուշարձանների վերանորոգման ու ամրացման գոյություն ունեցող կարգը, այն է՝ հուշարձանը մինչև վերանորոգելը պեղել, չափագրել, կազմել վերանորոգման գծագրերը, դրանք քննարկել և հաստատել համապատասխան գիտական խորհրդի կողմից։ Բացի դրանից, վերջին 15 տարում որպես սկզբունք է ընդունվել հուշարձանը վերանորոգել այնպես, որ վերանորոգված մասը ոչնչով չտարբերվի մյուս մասերից, մինչդեռ հուշարձանի գիտական վերանորոգումը պահանջում է հակառակը՝ վերանորոգված մասը պետք է առանձնացնել, քանի որ այն ինչ որ չափով ենթադրական է։ Այդ մեթոդի չկիրառման պատճառով թույլ են տրվել սխալներ ու աղավաղումներ։

Հուշարձանները վերանորոգման և պահպանման համար չեն ապահովված անհրաժեշտ նյութական միջոցներով, մասնագետներով և տեխնիկայով։ 1950 թ. հետո չեն կազմակերպվել հուշարձաններն ուսումնասիրող գիտական արշավախմբեր, իսկ 1960 թ. դադարեցվել են հուշարձանների չափագրումները, վերացվել է ֆոտոլաբորատորիան, որը կատարում էր դրական դեր։ Պատմական հուշարձանների չափագրությունների և ֆոտոնյութերի արխիվը, որը կարող էր հայ մշակույթի ուսումնասիրման կարևոր օջախ լինել, գտնվում է վատ պայմաններում։

Հուշարձաններ ունեցող գյուղերի, ավանների և քաղաքների հատակագծման ժամանակ անտեսվել են պատմական հուշարձանները։ Օրինակ, Թալինի եկեղեցու շրջապատում, ուր գտնվում են Կամսարական իշխանների պալատների և այլ շենքերի մնացորդներ, բազմաթիվ մահարձաններ, որոնք պետք է պեղվեն, նախատեսված է կառուցել քաղաքային այգի։

Ա. Երեմյանը նիստի մասնակիցների ուշադրությունը հրավիրեց նաև հուշարձանների տերիտորիաները բարեկարգելու, նրանց վրա անհրաժեշտ հսկողություն սահմանելու, հուշարձանները փչացումից փրկելու, աշխատավորության շրջանում հնագիտական կոթողների մասին պրոպագանդան ուժեղացնելու և այլ հարցերի վրա։

— Մեր ժողովուրդը մեծ ժառանգություն է թողել,— իր ելույթում ասաց Վ. Հարությունյանը,— որը մեծ պարտականություններ է գնում մեզ վրա, սակայն միանգամայն վատ ենք կատարում հուշարձանների պահպանման մեր այդ պարտականությունները։ Ներկայումս ավելի քան 200 հուշարձաններ վթարի տակ են, եթե առաջիկայում չվերականգնենք, ապա որոշ ժամանակից հետո դրանք կոչնչանան։ Հուշարձանների վատ պահպանման մեղքը ընկնում է սովետական տեղական օրգանների և հուշարձանների պահպանության հանրապետական վարչության, ինչպես և ընկերության վրա։ Միանգամայն վատ է հրատարակության գործը։ Դեռ 1965 թ. հուշարձան-

ների պահպանության ընկերությունը պետհրատին է հանձնել 3 անուն գիրք և 14 անուն բուկլետ, բայց մինչև այժմ ոչ մեկը լույս չի տեսել։

Կ. Հովհաննիսյանը, Արաբյանը, Ռ. Պարսամյանը, Վ. Բախչինյանը իրենց ելույթներում կանգ առան հանրապետության շատ հուշարձանների փչացումից փրկելու, վերանորոգման, տերիտորիաների բարեկարգման և այլ հարցերի վրա։

— Հուշարձանների պահպանությունը,— ասաց Ռ. Պարսամյանը,— համաժողովրդական գործ է, բայց այս հարցի նկատմամբ անտարբեր վերաբերմունք են ցույց տալիս ոչ միայն համապատասխան կազմակերպությունները, այլ նաև բնակչությունը։ Ցավալին այն է, որ վատ պահպանման հետևանքով շարքից դուրս են գալիս ոչ միայն հին, այլև նոր՝ հենց մեր ժամանակներում կառուցած հուշարձանները։ Հիանալի նախաձեռնություն էր աղբյուր-հուշարձանների կառուցումը։ Բայց սրանց մեծ մասն էլ վատ խնամքի պատճառով նույն բախտին է արժանանում, ինչպես հները։ Օրինակ 5—10 տարի առաջ Սիսիանում, Գորիսում կառուցված հուշարձաններից շատերը անմխիթար վիճակի մեջ են գտնվում։

Երևանի քաղսովետի գործկոմի նախագահ Գ. Հասրաթյանը իր ելույթում ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության ուշադրությունը հրավիրեց հուշարձանների պահպանման և օգտագործման մի շարք կազմակերպական հարցերի իրականացման վրա։ Մասնավորապես նա հարց բարձրացրեց կարևոր նշանակություն և մեծ հետաքրքրություն ունեցող մի շարք հուշարձանների մուտքը դարձնել վճարովի և գոյացած գումարը տրամադրել պահպանման ու վերանորոգման նպատակին։

Անդրադառնալով հուշարձանների պահպանման գործում գոյություն ունեցող աղաղակող թերություններին, Գ. Հասրաթյանը նշեց.

— Յուրաքանչյուր ժողովրդի կուլտուրայի հարստությունը միայն նրա սեփականությունը չէ, դա համայն մարդկության հարստությունն է, ահա թե ինչու հանրապետությունից դուրս գտնվող մեր հուշարձանների պահպանման հարցով նույնպես պետք է զբաղվենք։ Միթե ներելի է, որ Շուշիի հուշարձանը այժմ ծառայում է որպես մեքենա-տեխնիկական կայանի գործիքների վերանորոգման վայր և մազութի, նավթի, շինարարական մնացորդների կեղտի մեջ փչանում է։ Անհրաժեշտ է միութենական կառավարության առաջ հարց բարձրացնել ստեղծելու կուլտուրայի հուշարձանների պահպանության գործը կոորդինացնող կենտրոն։

Վերջում ելույթ ունեցավ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը, որը ամփոփելով նիստի արդյունքները նշեց հուշարձանների պահպանության ու վերականգնման կարևոր նշանակությունը։

Քննարկված հարցի վերաբերյալ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը ընդունեց «Հանրապետությունում կուլտուրայի հուշարձանների պահպանության վիճակի մասին» որոշում։ Որոշման մեջ նշված է, որ չնայած կատարված որոշ աշխատանքներին, հանրապետության տերիտորիայում գտնվող պատմական, գեղարվեստական, հնագիտական հուշարձանների մեծ մասը գտնվում է բարձիթողի վիճակում։ ՀՍՍՀ մինիստրների սովետի պետական շինարարության կոմիտեն, նրա ճարտարապետական հուշարձանների պահպանության և վերականգնման վարչությունը, աշխատավորների դեպուտատների տեղական սովետները գործուն միջոցներ չեն ձեռնարկել պատմական-ճարտարապետական մեծ արժեք ներկայացնող շատ հուշարձանների պահպանման, նորոգման, վերականգնման, տերիտորիաների բարեկարգման ուղղությամբ։ Բազմաթիվ փաստեր կան հուշարձանների փչացման, առանձին պատմա-ճարտարապետական հուշարձանների ոչ նպատակային օգտագործման վերաբերյալ (Աբովյանի, Եղեգնաձորի, Ալավերդու, Աշտարակի, Գորիսի, Թալինի, Արթիկի, Սիսիանը և այլ շրջաններ)։

Լավ չեն պահպանվում նաև առանձին կազմակերպությունների օգտագործման հանձնված պատմական-ճարտարապետական հուշարձանները, դրանք ժամանակին չեն վերանորոգվում, հաճախ կատարվում են կամայական վերակառուցումներ կամ ձևափոխություններ, որոնք նվազեցնում են նրանց պատմա-ճարտարապետական նշանակությունը, կեղծ պատրանք ստեղծում հնի նկատմամբ։ Միանգամայն վատ է հուշարձաններին կից տերիտորիաների պահպանումը, դրանց մի մասը բարեկարգելու, կանաչապատելու փոխարեն հատկացվել են առանձին քաղաքացիների շինարարություն կատարելու կամ այլ նպատակով օգտագործելու համար։

ՀՍՍՀ ԳԱ հուշարձանների պահպանության գիտա-մեթոդական խորհուրդը փաստորեն դադարել է գործելուց և ձևական բնույթ է կրում։ Պետշինի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության և ակադեմիայի գիտամեթոդական խորհրդի չհամագործակցված աշխատանքը խիստ բացասաբար է անդրադարձել հուշարձանների պահպանման վրա։

Անբավարար է հուշարձանների պահպանության հայկական ընկերության աշխատանքը։ Հանրապետության 33 շրջաններից միայն 22-ում են գործում ընկերության շրջանային խորհուրդները։ Կազմակերպչորեն չեն ամրապնդված Լենինականի և Դիլիջանի քաղաքային, Ստեփանավանի, Սիսիանի, Մարտունու շրջանային խորհուրդները։ Անբավարար է շեֆական աշխատանքը։ Հանրապետության 1300 դպրոցներից միայն 63-ի աշակերտներն են, որ վերցրել են հուշարձանների պահպանության շեֆությունը։

Թույլ է ծավալված հուշարձանների շուրջը կատարվող գիտա-մասսայական աշխատանքը, այդ նպատակի համար լավ չեն օգտագործվում մամուլը, ռադիոն, հեռատատեսությունը, քիչ են կազմակերպվում զեկուցումներ, դասախոսություններ, էքսկուրսիաներ, չի հրատարակվում հանրամատչելի գրականություն։

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության որոշմամբ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային սովետների գործադիր կոմիտեներին պարտավորեցվել է ուսումնասիրել և սովետներում քննության առնել իրենց վարչական տերիտորիայում գտնվող կուլտուրայի հուշարձանների պահպանման վիճակը և գործնական միջոցառումներ մշակել դրանց պահպանման, նորոգման, վերականգնման գործը արմատապես բարելավելու համար։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի պետական շինարարության կոմիտեին հանձնարարված է՝ 1969 թվականի ընթացքում հրատարակել Հանրապետությունում եղած բոլոր պատմական, ճարտարապետական, գեղարվեստական, հնագիտական և հեղափոխության հուշարձանների հավաքական ցուցակը, իսկ մինչև 1970 թ. կազմել հուշարձանների վերանորոգման, վերականգնման և դրանց տերիտորիաների բարեկարգման 5-ամյա պլանը (1970—1975 թթ.) և ներկայացնել Հանրապետության կառավարության հաստատմանը։ ՀՍՍՀ ԳԱ-ի հետ համատեղ կարգավորել պեղվող և նոր պեղումներով հայտնաբերված հուշարձանների պահպանությունը։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությանը հանձնարարված է վերակառուցել հուշարձանների պահպանության գիտա-մեթոդական խորհրդի աշխատանքը և անհրաժեշտ օգնություն ցույց տալ Հանրապետության իշխանության տեղական մարմիններին հուշարձանների նորոգումը, վերականգնումը գիտական հիմունքների վրա դնելու համար։

Պարտավորեցված է ՀՍՍՀ լուսավորության և բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրություններին, աշխատավորների դեպուտատների շրջանային ու քաղաքային սովետների գործադիր կոմիտեներին՝ պատմական հուշարձանների պահպանության Հայկական ընկերության տեղական կազմակերպությունների հետ միասին ձեռնարկել միջոցառումներ բուհերի ուսանողների և դպրոցական աշակերտների կողմից հուշարձանների պահպանության շեֆությունը վերջնելու։

ՀՍՍՀ Մինիստրների սովետին հանձնարարված է նախապատրաստել և գերագույն սովետի նախագահությանը ներկայացնել ՀՍՍՀ կուլտուրայի հուշարձանների պահպանության մասին համապատասխան օրենք ընդունելու նախագիծ։